ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/16-Հ1
24.02.2022Թ.ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/16 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «20» «06» 2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Գագիկ Սաֆարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և և «Շինարար-97» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հովհաննես Ահարոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 2022թ փետրվարի 24-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/16 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.05.2022թ թիվ 771-Ն որոշումը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Հաստատել Պայմանագրով նախատեսված աշխատանքների դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.1.2 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված աշխատանքները սկսել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և ավարտել սահմանված ժամկետից շուտ, սահմանելով աշխատանքների կատարման նոր վերջնաժամկետ՝ 2022թ նոյեմբերի 15-ը ներառյալ:

1.1.3 Հաստատել Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետների նոր օրացուցային գրաֆիկը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և թիվ 2 հավելվածները համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Շինարար-97» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
Կառավարական տուն 2,	Հեռ.՝ 093030366
ՀՀ ֆինանսների նախարարության	էլ. փոստ՝ hovhannes.aharonyan@gmail.com
գործառնական վարչություն	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Շիրակ մ/ճ
Հ/Հ 900011040608	Հ/Հ 1635270033183
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 05510886
Գլխավոր քարտուղար՝	**Տնօրեն՝**
_____ **Գ. Սաֆարյան**	_____ **Հ. Ահարոնյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«20» «06» 2022թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/16-Հ1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ. ՀՀ պետական բյուջեից, ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451600/501	**Վերականգնողական աշխատանքներ** (ՀՀ Լոռու մարզի Լոռի բերդ ամրոցի պարսպի հյուսիս-արևելյան հատվածի ամրակայման և մասնակի վերականգնման աշխատանքներ)	-	-	-	-	-	-	21540000	21540000	21540000	43080000	43080000	43080000	**43080000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- **Գ. Սաֆարյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

---------- **Հ. Ահարոնյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«20» «06» 2022թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/16-Հ1 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Չափաբաժին 1. Վերականգնողական աշխատանքներ

(ՀՀ Լոռու մարզի Լոռի բերդ ամրոցի պարսպի հյուսիս-արևելյան հատվածի ամրակայման և մասնակի վերականգնման աշխատանքներ)

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետ	
		Սկիզբ	Ավարտ
1	1. Վերականգնողական աշխատանքներ	Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	2022թ նոյեմբերի 15-ը ներառյալ
	ԸՆԴԱՄԵՆԸ	**Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը**	**2022թ նոյեմբերի 15-ը ներառյալ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Հ. Ահարոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՇԻՐԱԿ»
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Գյումրի,Պ.Սևակի 2շենք 3/1 տարածք
Հեռ.՝ .Հեռ. 510910 ներքին 5203 5204
Տեղեկատու՝ 86-86
Էլ.փոստ՝ gyumri@aeb.am
www.aeb.am

"SHIRAK" BRANCH of "ARMECONOMBANK" OJSC

244 Abovyan str.,Gyumri. 3104, RA
Tel.: Հեռ. 510910 ներքին 5203 5204
Call center: + 3741 08000-8686
E-mail: gyumri@aeb.am
www.aeb.am

16352-37/91

15.06.2022թ.

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/16»** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **«ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ**-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ***«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/16»*** պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **6,462,000 /վեց միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N **«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/16»** ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ՝ մինչև **14.06.2023թ.**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/16»** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ՇԻՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ Կառավարիչ Ս. Նորիկյան

«ՇԻՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ Սպասարկման բաժնի պետ՝ Հ. Սիմոնյան

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՇԻՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Գյումրի,Պ.Սևակի 2շենք 3/1 տարածք
Հեռ.՝ .Հեռ. 510910 ներքին 5203 5204
Տեղեկատու՝ 86-86
Էլ.փոստ՝ gyumri@aeb.am
www.aeb.am

"SHIRAK" BRANCH of "ARMECONOMBANK" OJSC
244 Abovyan str.,Gyumri. 3104, RA
Tel.: Հեռ. 510910 ներքին 5203 5204
Call center: + 3741 08000-8686
E-mail: gyumri@aeb.am
www.aeb.am

16352-37/92

15.06.2022թ.

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ**-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N **«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/16»** պայմանագրից (այսուհետ՝ պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **4,308,000 /չորս միլիոն երեք հարյուր ութ հազար/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N **«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/16»** պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ՝ մինչև **14.06.2024թ.**: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
1) N **«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-22/16»** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,
2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ՇԻՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ Կառավարիչ՝ Ս. Նորիկյան

«ՇԻՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ Սպասարկման բաժնի պետ՝ Հ. Սիմոնյան